

# ՄԵՆՉ ԵՆՉ ՄԵՐ ՅԱՎԻ ՏԵՐԸ

Մենք պիտի իիշենք մեր սրտի մրմուռ, դրանից հեռու չենք կարող գնալ, ինչը ան է ցանականանք օտարանալ, այն չի օտարվի, քանզի մեր ցավն է, ոչ թե օտարինը:

## ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅՐԻԿՅԱՆԵ

ցավով է հիշում աղջիկների մահը՝

### Ալվարդի և Աղավնիի:

Նրանք Ախմավան 2-ում էին, այնտեղ համեմատաբար ապահով էր և մեզ համար անսպասելի եղավ աղջիկների մահը. ընկերություններ էին և կապ սրաշտանելով իրար հետ հայտնվել էին մարտադաշտում: Ես այդ ժամանակ կանչված էի Երևան: Ազգային ժողովում քննարկվում էր Գորիսում ինձ պարետ նշանակելու հարցը, և ներկա չեմ եղել մարտի թեժ պահին: Հայտնված ժամին իմ վարձած ուղղարիուվ՝ օգնական խմբով, ժամ առաջ հասանք մարտադաշտ: Այդ օրը 200 երտսակներ հարձակվել էին մեր 36 հոգանոց ջոկատի վրա: 19 զոհ ունեցանք, մեծ թվով վիրավորներ: Ալվարդին հանձնարարված էր փախստականների հոգսերով զրադակել, սակայն նա կովկա թեժ կետում էր հայտնվել, ուր և կնքեց իր մահկանացուն: Ես այսպես եմ հասկանում, որ խիզախ հայությունների սիրտը չի տարել մի կողմ քաշված դիտել, թե ինչպես են զոհվում իրենց ընկերները: Նրանք զնացին զիտակցված մահի:

- Պարոն Հայրիկյան, մեր համառոտ գորոյն ուզում եմ ամփոփել մի հարցով, բազամ փորձություններով անցած անձեր, տեսել եք մեր աղջիկների և տղաների նահատակվելը. Դուք իրատես եք ինչ ծառայությունը թե՞:

Մեր անցյալի փորձն ու փորձությունը շպետը է նոռանանք. խորը չի եղել զենքը հայ կնոջը, քանի դեռ աշխարհում զենք կա, պետք է հայ կինը զործածել իմանա որպես պարզ և պարտադիր ճշմարտություն: Ովքեր դեմ են հայ կնոջ զենք զործածելու իմացությանը, նրանք բարձրագուներն են, նրանք լրեցին կնոջն էլ, ընտանիքն էլ, Հայրենիքն էլ: Այս ամենից զատ, հայ կինը բոլ այլև զենք կընելու ճակատագիրը չունենա և միշտ վնի օջախի կին, զերս ու ջերմացնող, տունը շենացնող կին:

## ԱԼՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ (11.10.1948-29.07.1992)

Մարդն ապրում է, ապրածին համսպատասխան պատմությանը բողոքում իր անցածը: Եվ այս ժամանակի-տարածության հետագործությունը ընդամենը ակնրարը է: Տարածությունն ու ժամանակը հանրագումարի բերելով տեսնում ենք մարդու կերպն ու ներաշխարհը, անձնավորում նրան յուրովի, քանզի իր ապրածը ենց խոսուն անձն է: Ալվարդը հենց այն կերպարն էր, որ ասելիքը՝ ապրածի լուս խոստվանանքին կոչեց: Նա իր տեսակի մեջ ամփոփի մի աշխարհ էր, որ խոսուն աշխարհի ահուելի տարածության մեջ մնաց որպես լուս վկա, իր պարածը բողնելով մեզ մեր յուրովի մեկնարանությանը: Նրան ոչ որ չասաց, թե ի՞նչ էր պետք իրեն, ինքը պետք է ընտրեր իր ես-ի բելադրանքով: Այսպիս ես-ը մի օր ճար կտար, քանզի չեր տեղավորվի իր աշխարհի մեջ: Սիրո ահուելի ուժն էր նղում նրան անդադար լինելու ընտրությանը: Երեն բաժին հասած Սերը անհնար է մասնատել, բաժանել, կիսել իր խակ աշխարհի մեջ: Այս հգր, շմասնատված, շանձնավորված ոգեղեն ուժով պետք է տառացաներ հալածված, վշտահար մանուկներին, որոնք կոչվում էին փախստականներ, որոնց աշբերի մեջ աշխարհի տարածքից բաժին հասած անրար տարսափն էր սառել: Հրեշտակոր նարդ արարած ճանաշած մանուկին այնքան Սեր պետք է տար, որ մոռանար նույնիսկ հարմարվեր ապրել այն մարդու հարեւանությամբ, որ մայր է մորրում որդու առաջ, աշխարհի ինչ ազգից ուզում է բող լինի, մեկ է, բառերի ընտրության տարբերակում հրեշտակորն է:

Ալվարդի Սիրո ոգեղեն ոմի կողմից անզորանում են բոլոր շարագործները:

Եվ այս Կերայ ու Կերպարով մի օր Սիրո ահուելի ուժով այստի ծովական Հող-Հայրենիքն, որ այլև մանկան աշք շատեր աշք-բրի մեջ՝ իր աշխարհ-տարածքի մեջ:

## ԱՂԱՎՆԻ ՏԵՐ-ԱՏԵՓԱՆՅԱՆ (18.06.1966-29.07.1992)



«Թող որոտան կայծակները ամենուրեք, Ախ, իմ հայոց ազգիս վրա նատ շղիալչի երբեք, երբեք: Մամուսկալած բարերը հին բորբոքում են ցավերը ինը, Ախ, իմ հայոց ազգիս վրա նատ շղիալչի երբեք, երբեք...»

Սիրելի բնբերցող, Զեզ ենք ներկայացնում Աղավնի Տեր-Ատեփանյանի հարեւանության Ս. ՄԻՐԶՈՅԱՆԻ «Հիշողության և ուսափորությանից» նամակը, անձնվեր հայրություն մասին:

Աղավնին ծնվել է 1966 թ., սովորել է Երևանի թիվ 142 միջ. դպրոցում: Սովորելու տարիներին ցուցաբերել է բարձր առաջադիմություն, եղել է խոհեմ, ազնիվ, ընկերասեր ու համարձակ աղջիկ: Այդ համարձակությունն ի հայտ եկավ հատկապես Նարարապյան շարժման ժամանակ, և նու իր կանոնը տվեց Հայրենիքին (1992 թ. հունիսի 29-ին) Լաշինի շրջանի Նշագ վույշի համար մղված մարտուն:

Գորիսի շրջանի Տեղ գյուղի մարտիկները, դրանց թվում իմ եղբորությի Շասուն Սեյրանի Միրզոյանը զոհված 1993 թ. ապրիլի 3-ին, Կորրա տարի համար մղված մարտերում, լսելով լուր, որ ըննամու կողմից խոշտանգված են իրենց զոհված ընկերները, ցուցաբերել են օգնություն և նրանց դիակները տեղափոխել Գորիս:

Զոհվելուց մեկ շաբաթ առաջ Աղավնին ոտքով, զիշերով զնուած Տեղ գյուղի որպեսի հասնի իր մարտական ընկերներին: Սաստի հայրը, տեսնելով Աղավնիին, իրավիրում է զիշերելու իր տանը: Զրոյցի ժամանակ պարզվում է, որ նա կատարում է մարտական առաջադրանք: Վաղ առավոտյան եղբայրս Սեյրանը, ձիով Աղավնիին հասցնում է իր մարտական ընկերներին: Աղավնի զոհվելուց հետո, պատահմամբ Աղավնիին մայրը մեր տանը հանդիպեց եղբորս և նրա որդուն Սաստինին: Նրանք, տեսնելով Աղավնիին նկարը մոր կրծքին, ճանաչեցին և պատմեցին վերոհիշյալ պատմությունը: Մինչ այդ եղբայրս չի իմացել, որ բազ հերոսությն իմ հարեւանն է:

Պատահական առիրով նրա մարտական ընկերներից մեկն էլ պատճել է Աղավնիի մարտական կենսագրության մասին, որ նա եղել է անվախ, համարձակ և դիպուկ իրածիվ:

ՄԱՐԳԱՐԵՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ